



Ուղեցույց

ՏԱՆՁԻ, ԽՆՁՈՐԻ, ՍԱԼՈՐԻ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տանձենի (լատ.՝ *Pýarm*), վարդագլխների ընտանիքի պտղատու ծառ է: Հայտնի է մոտավորապես 60 տեսակ, մշակության մեջ՝ 5000 սորտ: ՀՀ-ում հանդիպում է 16 (20) տեսակ՝ կովկասյան, սուր սղոցանման, Թախտաջյանի, ուռատերև, սիրիական և այլ տանձենիներ՝ տարածված Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Մեծ թիվ են կազմում նաև տանձենու բնաշխարհիկ (Զանգեզուրի, խոնարհված, բարձր) տեսակները՝ հիմնականում Սյունիքի մարզում: ՀՀ բոլոր մարզերում մշակության մեջ տարածված է սովորական տանձենին, որն Արարատյան նախալեռնային, հյուսիսարևելյան, Զանգեզուրի, Լոռի-Փամբակի գյուղատնտեսական




գոտիներում առաջացնում է ինքնուրույն համակեցություններ՝ տանձուտներ: Կուլտուրական սորտերը հիմնականում առաջացել են հետևյալ տեսակներից՝ տանձ սովորական կամ անտառային՝ *Pýrus communis*, որը վայրի վիճակում աճում է Եվրոպայում, Արևմտյան և Միջին Ասիայում,

տանձ կովկասյան՝ *Pýrus cavcasica*, տանձ ուսուրիական՝ *Pýrus ussuriensis*, տանձ չինական՝ *Pýrus serotina*, ձյունատանձենի՝ *Pýrus nivalis*: Բոլոր սորտերն ըստ հասունացման և օգտագործման ժամկետների բաժանվում են 3 խմբի՝ ամառային, աշնանային և ձմեռային:

Տանձենու բարձրությունը 15-20մ է, ցողունը՝ ճեղքվածքավոր, մուգ մոխրագույն, ճյուղերը՝ մոխրագույն, կարմրավուն կամ դեղնավուն, հարթ՝ ոսպահատիկներով պատված: Սաղարթը սեղմված, բրգաձև է, ուժեղ ճյուղավորված: Արմատային

համակարգն առանցքային է, քիչ ճյուղավորված: Տերմները ձվաձև են, մուգ կանաչ, փայլուն, հարթ, եզրերը՝ մանր ատամնավոր: Ծաղկաբույլը վահանիկ է, ծաղիկները երկսեռ են, խոշոր, սպիտակ, երբեմն՝ բաց վարդագույն՝ հավաքված ծաղկաբույլերում (5–15-ական): Պտղամիսը բարձրորակ է, նուրբ, հաճելի համով: Մերմերը մանր են, սևավուն: Երկարակյաց է, ապրում է մինչև 200, ՀՀ-ում՝ 100–150 տարի: Յուրաքանչյուր ծառի բերքատվությունը 30–300 (երբեմն՝ 1000) կգ է:

Պտուղները պարունակում են շաքարներ, թթուներ, աղաղանյութեր, A, B, C վիտամիններ: Օգտագործվում են թարմ և վերամշակված: Հայաստանում մշակվում են Մալաչա, Սինի, Կարմրենի, Ձմեռնուկ, եվրոպական ծագում ունեցող՝ Վիլյամս ամառային, Անտառային գեղեցկուհի, Բերե Բոսկ, Բերե Արդանպոն, Օլիվիե դը Մեր, Նելիս ձմեռային և այլ սորտեր: Ինչպես նաև, որոշ տեսակներ նույնիսկ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:



Տանձի քիմիական բաղադրությունը

**Բոլոր արժեքները հաշվարկված են 100 գրամի համար*

Տանձ սննդամթերքը պարունակում է ավելի շատ Բջջանյութ(Fiber) քան սննդատեսակների 74 տոկոսը: Հարկ է նշել, որ չնայած նրան, որ կան սննդի տեսակներ (26%), որոնք պարունակում են ավելի շատ Բջջանյութ(Fiber), սակայն այս

սննդամթերքը ինքնին ավելի հարուստ է Բջջանյութ(Fiber)-ով քան ցանակացած այլ տարրով: Համանման ձևով այս սննդամթերքը համեմատաբար հարուստ է Վիտամին C, Շաքար, Ածխաջրեր և Cryptoxanthin, beta տարրերով

Տանձենու սովորական պտուղը պարունակում է ճարպեր (120 մգ` 100 գ հումքի մեջ), որոնց մոտ կեսը միաչիագեցած և բազմաչիագեցած ճարպեր են, և չի պարունակում խոլեստերին: Բարենպաստ են կալցիումի (9 մգ), մագնիումի (7 մգ), ֆոսֆորի (11 մգ), կալիումի (119 մգ) փոխհարաբերակցությունները, տանձի պտղի և տերևի եփուկներն օգտակար են օստեոխոնդրոզի և հոդացավերի դեպքում: Տանձի մեջ համեմատաբար քիչ է նատրիումը (1-2 մգ), այն նպաստում է աղի և դժվարամարս ուտեստների յուրացմանը: Պտուղը պարունակում է մոտավորապես հավասար քանակի պղինձ և ցինկ (0,08 մգ և 0,1 մգ, նաև 0,17 մգ երկաթ, 4,2-10 մգ ասկորբինաթթու և 5 մկգ վիտամին K, որոշ տեսակներում` զգալի քանակությամբ ֆոլիաթթու, և այլ վիտամիններ:

Տանձի պտղում պարունակվում են մոտ 0,3 տոկոս օրգանական թթուներն, հիմնականում` խնձորաթթու), որը 2 անգամ քիչ է, քան լուիկում, դեղձում, 2,5 անգամ քիչ է, քան խաղողում, և ավելի քան 4 անգամ քիչ է` քան ծիրանի, սալորի, բալի, խնձորի մորու, սև հաղարջի պտուղների (հատապտուղների) մեջ և այլն: Նման առանձնահատկության շնորհիվ` տանձը տրոհում է երիկամների օքսալատային և ուրատային քարերը:

Տանձ - GLYCEMIC INDEX

38

Նմանատիպ բաղադրությամբ սննդամթերք`

Դեղձ


42

Նուռ

67

Ծիրան

31



Ներոնշյալ հիմնական բաղադրամասերի գրաֆիկը ցույց է տալիս սննդում պարունակվող սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի քանակը: Այս տարրերը մեզ էներգիա տրամադրող տարրերն են: Էներգիայով ամենախիտը ճարպերն են: Ճարպի 1 գրամը մեզ փոխանցում է 9 կկալ էներգիա: Ածխաջրերի և սպիտակուցների 1 գրամին համապատասխանում է ընդամենը 4 կկալ էներգիա: Գրաֆիկի վրա կարող եք նաև տեսնել ջրի քանակը: Երբ ջրի քանակը հայտնի չէ, շատ դժվար է գնահատել սննդամթերքի իրական սննդային արժեքը:



Տանձի կարևոր չափանիշները՝

Ցածր Խոլեստերին

V

Քիչ հազեցած ճարպեր

V


Քիչ նատրիում

V

Քիչ շաքար

V

Հիմնական բաղադրամասերի Աղյուսակ



Տանձի օգտակար հատկությունները

Առհասարակ առավել առողջարար են համարվում տանձի բուրբուռնավետ տեսակները: Իսկ Հայաստանում աճող տեսակներն անկրկնելի են իրենց համով: Տանձենին սովորաբար ծաղկում է մայիսին, ինչպես որ վարդագգիներից շատերը: Տարբերվում են ամառային, աշնանային և ձմեռային տեսակները: Աշնանայինն առավել բուրբուռնավետ և համեղ տեսակն է, պահպանվում է 2-3 ամիս:

Տանձի մեջ կան այնպիսի նյութեր, որոնք բարձրացնում են օրգանիզմի պաշտպանիչ ուժերը, պայքարում են դեպրեսիայի, ինչպես նաև տարբեր վարակների դեմ: Տանձի բաղադրության մեջ շատ երկաթ



կա: Այն

շատ կարևոր է արյան կարմիր գնդիկների վերարտադրման համար: Դրա համա



ր էլ տանձը խորհուրդ է տրվում օգտագործել հոգնածության, գլխապտույտի, սրտի զարկերի հաճախության ավելացման (տախիկարդիա), ախորժակի անկման, բերանի անկյուններում ճաքերի առաջացման, հյուսվածքների դանդաղ լավացման, նույնիսկ ցրտի զգայնության ժամանակ, որոնց բոլորի պատճառը կարող է հանդիսանալ երկաթի պակասը օրգանիզմում: Մեկ հատ միջին չափի տանձը պարունակում է վիտամին «C»-ի օրվա չափաբաժնի մոտ 10%-ը: Պտղամիսը և կեղևը պարունակում են 4 գ բջջանյութ, որն էլ նորմալացնում է շաքարի մակարդակը արյան մեջ,

բարելավում է մարսողությունը: Տանձի մեջ գտնվող կալիումը նորմալացնում է սրտի և մկանների աշխատանքը: Տանձի պտուղների բաղադրության մեջ գտնվող օրգանական թթուները լավացնում են նյութափոխանակությունը, ուժեղացնում մարսողական պրոցեսները, խթանում լյարդի և երիկամների աշխատանքը:

Միզապարկի բորբոքման և երիկամային հիվանդությունների դեպքում առավել օգտակար են վայրի տանձենու պտուղները, որոնք չեն զիջում արջախաղողին (մաթուզենի) և հապալասենուն: Այդ տեսակի պտուղները հարուստ են վիտամին P-ով և դաբաղանյութերով (մոտ 20 %):

Տանձի թթվաշ և պինդ տեսակները ամրապնդում, կազդուրում են լյարդը և ստամոքսը, գրգռում ախորժակը, սակայն հակացուցված են տարեցների և դուրսագրգիռ մարդկանց համար: Այս պտուղը բարերար ազդեցություն ունի օրգանիզմի վրա, հրաշալի հակադեպրեսանտ է, երիտասարդացնող հատկություն ունի: Տանձի պտղամսի մեջ պարունակվող ասկորբինաթթուն արագացնում է վերքերի ապաքինման ընթացքը, իսկ տանձենու տերևներից պատրաստվում է թուրմ, որն օգտագործվում է սնկային և մաշկային հիվանդությունների դեպքում:

Չորացրած, հատկապես անտառային տանձենիների պտուղները շատ օգտակար են գիրության, շաքարային դիաբետի, լյարդի և ենթաստամոքսային գեղձի



հիվանդությունների, շագանակագեղձի բորբոքման դեպքում, այս հիվանդությունների բուժման համար հարկավոր է ցինկ, կարևոր է, որ տանձի մեջ նաև պղինձ է պարունակվում, քանի որ այդ երկու տարրերը (Cu և Zn) անտազոնիստներ են:

Շաքարային դիաբետի դեպքում ազնվամորու, հոնի հյութերից բացի՝ խորհուրդ է տրվում նաև տանձի թարմ հյութը: Որպես դիետիկ սնունդ կիրառվում է ոչ միայն դիաբետի դեպքում, այլև՝ որպես նիհարեցնող միջոց: Ինչպես նաև տանձահյութն օգտագործվում է սրտային, թոքային, ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում: Տանձի բոլոր տեսակներն էլ ունեն կապոդ ներգործություն: Սակայն, տանձը խորհուրդ է տրվում ուտել ճաշելուց 30-40 րոպե հետո, և քանակությունը չչարաշահել:

Հայաստանում մշակվող տանձերի տեսակները

Ըստ հասունացման ժամկետի Հայաստանում տարածված են ամառային, աշնանային և ձմեռային սորտերը: Ամառային սորտերը հասունանում են հուլիս-օգոստոսին: Դրանցից լավագույններն են՝ Վիլյամս (այլ անվանմամբ՝ Բոն Կրետեն

Վիլյամս, ամառային Վիլյամս, ամառային Դյուշես), Կարմրատանձ, Մալաչա և այլն: Աշնանային սորտերը հասունանում են սեպտեմբերին (Բյորե բոսկ, Ելենա, Անտառային գեղեցկուհի, Լեոնային գեղեցկուհի, Սինի ևն): Ձմեռային սորտերը (Բերե Արդանպոն, Օլիվե դը Սերր, Ձմեռնուկ ևն), Հայաստանում դրանք կոչվում են պահունի, հավաքում են սեպտեմբեր-հոկտեմբերին, սակայն հասունանում են հավաքելուց հետո, պահելու ընթացքում: Ձմեռային սորտերը լավ են պահպանվում և պարունակում են մինչև 13 % շաքար: Դրանք լավագույն աղանդերային սորտերն են: Պտղի զանգվածը կախված սորտից 25-300 գ է (երբեմն՝ ավելի):

Տանձի սորտերն իրենց համով և նշանակությամբ լինում են աղանդերային՝ փայլուն քաղցր պտղամսով և քիչ թթվաշ, հայտնի են Բերե, Դյուշես անուններով (ձմեռային Դեկանկա, Բերե Բոսկ, Բերե Արդանպոն), սեղանի մանրահատիկ հյութալի, հաճելի համ ունեցող պտղամսով, արդյունաբերական՝ կոպիտ և միջին համի պտղամսով, թարմ վիճակում օգտագործելու համար քիչ են պիտանի, գործածվում է խոհարարության մեջ և վերամշակման համար:

• Սուխումի Դյուշես

Սորտի ծագման մասին հավաստի տվյալներ չկան: Կուլտուրական սորտի պատահական սերմնաբույս է շրջանացված Վրաստանում:

Երիտասարդ ծառերի աճը թույլ է, բայց հետագայում հասնում է զգալի չափերի: Մաղարթը բրգաձև է, ճյուղավորությունը միջին խտության: Պտղի մեծությունը միջինից ցածր է, զանգակաձև: Պտղամաշկը միջին ամրության է, սկզբում գորշ կանաչավուն, իսկ հասունացման ժամանակ՝ դեղնավուն: Պտղամիսը բաց դեղնավուն է, խոշորահատիկ, հյութալի, քաղցր, թույլ թթվությամբ





և տտիպությամբ: Ծառերը միջին բերքատվության են: Պտուղը հասունանում է օգոստոսի կեսերին, պահվում են երկու շաբաթ: Ծառերի ցրտադիմացկունությունը բավականին բարձր է, պտուղները ճյուղերին ամուր կպած են: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն են: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:

• **Բեսսեմյանկա**

Հնագույն ռուսական սորտ է, հավանաբար բազմամյա ժողովրդական սելեկցիայի արդյունք: Ամենաշատ տարածված սորտն է եղել ԽՍՀՄ-ի միջին գոտում: Բեսսեմյանկա անունն ստացել է պտուղների մեծ մասի մեջ սերմերի բացակայության պատճառով: Ծառերի աճեցողությունը միջինից բարձր է, սաղարթը՝ լայն բրգաձև: Պտուղների մեծությունը միջինից ցածր է, կարճ տանձաձև: Պտղամաշկը պինդ է, կանաչ, հասուն ժամանակ՝ ոսկյա դեղնավուն, կարմրա-դարչնագույն թշկով: Պտղամիսը դեղնավուն է, խոշորահատիկ, հյութալի, քաղցր, կիսահալչող, թեթև թնդահամությամբ: Ծառերը միջին բերքատու են, պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է մինչև 10 օր: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր է, պտուղները ճյուղերին ամուր են կպած: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:

• **Լեռնային Գեղեցկուհի**

Այս սորտը ստացվել է Գյումրիում, Անտառային գեղեցկուհի և Միչուրինի Բերե ձմեռային սորտերի տրամախաչումից: Շրջանացված է Հայաստանի լեռնային գոտում: Ծառը միջին աճեցողության է, սաղարթը բրգաձև, ճյուղավորությունը խիտ: Պտուղը միջին



մեծության է, կլորավուն կամ կարճ տանձաձև: Պտղամշակը բարակ է, միջին ամրության, հիմնական գույնը դեղին, հասուն ժամանակ՝ դեղնա-ոսկեգույն, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, առանց քարային բջիջների, հյութալի, քաղցրա-թթվային դեսերտային համով: Ծառերի բերքատվությունը միջինից բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի կեսերի, պահվում են 40-50 օր:


Ծառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն, պտղի միացման ամրությունը ճյուղին միջին է, սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:

- **Մալաչա**


Ժողովրդական սելեկցիայի հնագույն հայկական սորտ է, լայն տարածված է Հայաստանի ցածրադիր գոտիներում, Ադրբեջանի, Նախիջևանի շրջանում և մասամբ Վրաստանում:

Ծառը միջին աճեցողության է, սաղարթը բրգաձև, ճյուղավորման խտությունը՝ միջին: Պտուղը շատանձաձև է, միջին մեծության: Պտղամաշկը ամուր է, դեղնականաչավուն, հասուն շրջանում՝ դեղնա-ոսկեգույն, արևի կողմում՝ թույլ գունավորումով: Պտղամիսը դեղնավուն է, նուրբ, հյութալի, յուղային, հալչող, քաղցր, ունի լավ բուրմունք և հիանալի դեսերտային համ: Ծառերի բերքատվությունը Գյումրու բարձրավանդակի պայմաններում միջակից ցածր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի առաջին կեսերին, պահվում են 15-20 օր: Ծառերն ունեն միջին ցրտադիմացկունություն, պտղի միացման ամրությունը ճյուղին միջին է, սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:

- **Անտառային Գեղեցկուհի**



Պատահական սերմնաբույս է, գտնվել է Բելգիայում՝ XIX դարի սկզբներին, լայնորեն տարածված է Արևմտյան Եվրոպայում, հյուսիսային Ամերիկայում: Բարձր ցրտադիմացկուն սորտերից է: Ծառերի աճեցողությունն ուժեղ է, սաղարթը լայն բրգաձև, ճյուղավորման խտությունը՝ միջին: Պտղի մեծությունը միջինից բարձր է՝ ձվատանձաձև: Պտղամաշկը բարակ է, պինդ, կանաչադեղնավուն, հասուն շրջանում՝ ոսկյա-դեղնավուն, վառ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը դեղնա-սպիտակավուն է, մանրահատիկ, հյութալի, յուղանման, քաղցր, ունի հիանալի դեսերտային համ, ուժեղ բուրմունք: Ծառերի բերքատվությունը բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի առաջին կեսին, ամրությունը ճյուղին միջինից ցածր է: Պահվում է 2-3 շաբաթ: Ժամանակին հավաքելու դեպքում (հասունացումից 10 օր առաջ) դիմանում է տեղափոխումներին: Հիմնականում օգտագործվում է թարմ վիճակում: Ծառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն, հողի նկատմամբ պահանջկոտ չեն, բայց լավ են աճում բերրի, փուխր հողերում: Սակայն այս սորտն ունի երկու էական թերություն՝ պտուղը և տերևները շատ ուժեղ վնասվում են քոսից և պտուղները հեշտությամբ թափվում են:




• **Հեղինե**

Ստացվել է Անտառային գեղեցկուհի և Միչուրինի բերե ձմեռային սորտերի տրամախաչումից: Շրջանացված է Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում: Տարբեր միկրոգոտիներում տարվում են արտադրական փորձարկումներ:




Ծառերը միջին աճեցողության են, լայն կլորավուն սաղարթով, մասամբ կախ ընկած ճյուղերով: Պտուղը կլորավուն է կամ բութ տանձաձև, միջինից բարձր: Պտղամիսը պինդ է,

կանաչա-դեղնավուն, հասուն շրջանում՝ մուգ-կարմրավուն ծածկույթով, որը զրադեցնում է պտղի կեսը: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ հյութալի, յուղային, ունի միջին բուրմունք, թթվաքաղցրավուն, դեսերտային համ: Ծառերի բերքատվությունը բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի վերջին տասնօրյակում և պահվում 60-70 օր: Հիմնականում օգտագործվում են թարմ վիճակում: Պտղի միացման ամրությունը ծառին միջինից բարձր է: Ծառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն: Լավ են տանում ջերմաստիճանի տատանումները, որը բնորոշ է լեռնային շրջաններին: Սնկային հիվանդությունների և պտղակերի նկատմամբ դիմացկուն են:



- **Միչուրինի բերե ձմեռային**

Ստացել է Ի. Վ. Միչուրինը՝ ուսուրիական տանձենու սերմնաբույսը ծաղկման առաջին տարում խաչասերելով Հարավային Ռոյալ սորտով: Ստացված սորտը իր մեջ զգալիորեն համատեղել է նախնիների լավագույն հատկանիշները: Ծառերի աճեցողությունը միջինից բարձր է, սաղարթը՝ լայն, բրգաձև, նոսր, որոշ չափով կախ ընկած ճյուղերով: Պտուղը միջին մեծության է, կարճ տանձաձև, պտղամաշկը պինդ, բաց կանաչավուն, հասուն շրջանում՝ գորշ, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, խոշորահատիկ, կիսահալչող, հյութալի, տտիպ, ունի թույլ բուրմունք, գինեքաղցրավուն համ: Ծառերի բերքատվությունը միջինից բարձր է: Պտուղը հասունանում է հոկտեմբերի առաջին տասնօրյակում: Պտղի միացման ամրությունը ճյուղին ուժեղ է: Պտուղը պահվում է 30-40 օր: Ծառերը բավականին ցրտադիմացկուն են, բունն ունի համեմատաբար թույլ դիմացկունություն: Պտուղները քիչ են վարակվում քոսով և պտղակերով: Համային հատկանիշները շատ փոփոխական են,



կախված են տարվա օդերևութաբանական, ինչպես նաև հողային պայմաններից: Որոշ տարիների ստացվում են բարձր որակի խոշոր պտուղներ, իսկ երբեմն էլ պտուղները լինում են մանր, անհամ, տտիպ, պտղամիսը կոպիտ, մեծ քանակությամբ քարային բջիջներով:



Պտուղների հասունության աստիճանը

Ճիշտ	Ժամանակին
բերքահավաքի	կազմակերպումը
նպաստում է	որակով բերքի
ստացման	և պահպանության
ժամանակ	կորուստների
նվազմանը:	Նպաստավոր
հասունացման	փուլում

բերքահավաք կազմակերպելիս, առանց լրացուցիչ ծախսերի կարելի է ստանալ տանձենու մինչև 24 տոկոս հավելյալ բերք:

Կան պտուղների հասունացման հետևյալ փուլերը՝

- Բերքահավաքային
- Սպառողական
- Ֆիզիոլոգիական

Երկարատև պահպանման համար պիտանի են տանձենու աշնանային և ձմեռային սորտերը, որոնց պտուղները հավաքում են ոչ լրիվ հասունացած վիճակում՝ բերքահավաքային հասունացման փուլում: Բերքահավաքային հասունացումը տարբերվում է պտղի ամառային, աշնանային և ձմեռային սորտերի մոտ:

Հայտնի փաստ է, որ խակ պտուղներն ավելի ինտենսիվ են շնչում և ծախսում պահեստային նյութերը, մյուս կողմից պտղի դիմադրողականությունը լրիվ չի կազմակերպվում, որի պատճառով վաղաժամկետ հավաքված պտուղները ենթակա են տարբեր հիվանդությունների և մանրէաբանական փչացումների իսկ

հասունացածները, չնայած ունենում են լավ ապրանքային տեսք, պահպանության ժամանակ արագորեն գերհասունանում են և կորցնում իրենց ապրանքային տեսքը, ինչպես նաև սպառողական մյուս հատկությունները: Այդ պատճառով էլ հասունության աստիճանի ճիշտ որոշումը կարևոր նշանակություն ունի բերքի որակի պահպանման գործում:

Ընդհանրապես պտուղների մեկ հասունացման փուլից դեպի մյուս հասունացման փուլին անցնելու ճշգրիտ պահը որոշելը դժվար է: Սակայն, գոյություն ունեն բերքահավաքի ժամկետը որոշող մի քանի հատկանիշներ որոնք թույլ են տալիս բերքահավաք կատարել օպտիմալ ժամկետում, նվազագույնի հասցնելով որակական և քանակական կորուստները: Պտուղների մոտ բերքահավաքային հասունացումը որոշում են հետևյալ հատկանիշներով.

- Բերքահավաքային հասունացման սկզբում պտուղները հասնում են սորտին բնորոշ մեծության, ձեռք են բերում սորտին բնորոշ գունավորվածություն:
- Պտղի մաշկը և պտղամիսը դառնում են ավելի փափուկ:
- Որոշ սորտերի պտուղներ ձեռք են բերում տվյալ սորտին բնորոշ համ և բույր:
- Պտղակոթը հեշտությամբ անջատվում է պտղաշիվից և այլն:

- Կարևոր է հասունության աստիճանը որոշելիս հաշվի առնել նաև պտղաթափի երևույթը:



Բերքահավաք

Բերքահավաքը ամենապատասխանատու աշխատանքներից մեկն է և սխալ ժամկետում կատարելու հետևանքով տեղի են ունենում զգալի կորուստներ: Բացի ճիշտ ժամկետը որոշելուց, չափազանց կարևոր են նաև պտուղները քաղելու տեխնիկան, բեռնման և բեռնաթափման, փոխադրման աշխատանքները: Այս ամենից մեծապես կախված է պտուղների հետագա պահունակությունը:


Բերքահավաքը պետք է սկսել առավոտյան շաղն անցնելուց հետո, որովհետև արգելվում է պտուղները քաղել խոնավ, ցողը վրան վիճակում: Ցանկալի է պտուղների քաղը սկսել ներքևի ճյուղերից, աստիճանաբար բարձրանալով վերև, այնուհետև քաղել սաղարթի ներսի պտուղները, որպեսզի պտուղները քիչ թափվեն: Պտուղները պետք է քաղել պտղակոթի հետ միասին, քանի որ պտղակոթի պոկված մասը կարող է բորբոսասնկերի թափանցման ուղի հանդիսանալ: Քաղված բերքը



պետք է առավել զգուշությամբ դատարկել արկղերի կամ դույլերի մեջ, արպեսզի բարձրությունից իրար վրա ընկնող պտուղները վնասվածքներ չստանան:

Տանձի պահպանման տեխնոլոգիան

Յուրաքանչյուր պտղատեսակ սառնարային պահպանության դնելիս գլխավոր և վերջնական նպատակը պահպանության վերջում որակյալ, լավ ապրանքային տեսք ունենալն է: Տանձի պտուղները նվազագույն կորստով և բարձր որակով պահպանելու համար շատ կարևոր է իմանալ տանձի պահպանման տեխնոլոգիան և առանձնահատկությունները:



- Տանձի պտղակեղևն ավելի նուրբ է, քան խնձորինը: Հետևաբար տանձի պտուղները անզգույշ լինելու դեպքում ավելի շատ են մեխանիկական վնասվածքներ ստանում:
- Տանձի պտուղները ծատ զգայուն են ջերմաստիճանային պայմանների նկատմամբ:
- Տանձի պտուղներից ջրի գոլորշիացման ինտենսիվությունն ավելի բարձր է, այդ պատճառով էլ հարաբերական խոնավությունը պետք է պահել 90-95%-ի սահմաններում:



- Տանձի պտուղների մեկ այլ առանձնահատկություն էլ այն է, որ դրանց պտղամիսը սկսում է փափկել սերմնաբնի շրջանում: Հետևաբար շատ կարևոր է դրանց ջերմաստիճանի իջեցումը հնարավորին չափ արագ, արպեսզի սերմնաբնի շրջանում ջերմաստիճանը արագ իջնի նպաստավոր սահմանների:

Տանձի պահպանման ջերմաստիճանը տատանվում է -



1-+2°C սահմաններում հիմնականում 0-1°C, իսկ հարաբերական խոնավությունը՝ 90-95%-ի սահմաններում:

Պահպանության վերջում տանձի ուշահաս սորտերի մի մասի պտուղները ձեռք են բերում սորտին հատուկ գույնը, համր, բուրմունքը: Սակայն հիմնական մասը ցածր ցածր ջերմաստիճանի տակ չի հասցնում հասունանալ և մնում է խակ, իսկ պտղամիսը կոշտ: Այդպիսի պտուղները վաճառքի հանելուց առաջ անհրաժեշտ է ենթարկել կարգավորող հասունացման: Տանձի խակ պտուղները հնարավոր է սպառողական

հասունացման հասցնել սենյակային պայմաններում 1-20 շաբաթ պահելով: Այն մեր հանրապետությունում ամենատարածված մեթոդն է: Չնայած այս մեթոդը բնական կորուստների ֆիզիոլոգիական հիվանդությունների և մանրէաբանական փչացումների մեծ տոկոսի պատճառով անընդունելի է:

Կարգավորվող հասունացման կարելի է ենթարկել նաև մի քանի օրում և ավելի քիչ որակական կորուստներով: Դա կատարվում է հատուկ խցերում: Այս դեպքում պտուղների հասունացումը տևում է 3 օրից ոչ ավել և ապահովում են մրգի բարձր որակ: Այդ նպատակով էլ սառնարանային տնտեսություններում նախատեսված է լինում 20-25-ից մինչև 100տ տարողությամբ հատուկ խուց: Այս խցերում կարգավորվող հասունացումը իրականացնում են թթվածնի բարձր պարունակության, ածխաթթու գազի ցածր քանակի կամ լրիվ բացակայության, համեմատաբար բարձր ջերմաստիճանի և էթիլենի որոշակի քանակության առկայության պայմաններում: Նշված գործողությունները կատարելուց հետո 3-րդ օրը ստուգվում է պտուղների հասունության աստիճանը, և եթե այն համարվում է



բավարար, խցի ջերմաստիճանը նորից իջեցնում են մինչև 3-4°C: Այս գործողության նպատակն է ֆիքսել պտուղները տվյալ հասունացման փուլում, որպեսզի հնարավոր լինի հանել վաճառքի, ինչպես նաև կանխել գերհասունացումը:

Տանձի պահունակության վրա կարող են ազդել մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ հողակլիմայական պայմանները, ծառերի պատվաստակալը և



էտը, պարարտացումը, ինչպես նաև ոռոգումը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՃԵՑՎՈՂ ԽՆՁՈՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



Խնձորենին վարդագգիների ընտանիքին պատկանող բույս է, տարածված է Հյուսիսային կիսագնդի տաք գոտում: Քանի որ խնձորենու տերևները փոկված են, նրան բնորոշ է լայն սաղարթը: Կան սորտեր որոնց սաղարթն ունի գնդաձև, աստղաձև տեսք:

Ծաղկման շրջանը ապրիլ-մայիս ամիսներն են:

Ամբողջ աշխարհում կա 10000-ից ավելի խնձորենու տեսակ, Խորհրդային Հայաստանում հայտնի էր 300 տեսակ:

Հայաստանում շրջանացված սորտերն են՝

Ամառային- Աստրախանի կարմիր, Աստրախանի սպիտակ, Վիրջինյան վարդագույն, Սովետսկոյե, Բոլշակ, Բելֆյորի քույրը, Բորովինկա Նոր

Աշնանային- Չելինի, Պեպին-շաֆրանային, Պեպին-կիտայկա, Բելֆյոր-կիտայկա, Շտրեյֆլինգ, Կուլոն-կիտայկա, Շաֆրան-կիտայկա

Զմեռային- Բելֆյոր ռեկորդ, Բիսմարկ, Դիանա, Ուելսի, Ռենետ բերգամոնտային, Պեպին Չերնենկոյի:

Արևմտյան Հայաստանում խնձորի հայրենիքը Արտամետ գյուղն է: Դեմիրճյան խնձորից առաջ Հայաստանում տարածված էին՝ Շերտավոր ամառվա, տափակ, Շշի, Սոխի, Անարատ, Զրիսկան տեսակները:



Մշակովի խնձորից բացի անտառներում աճում էր վայրի խնձոր, որը մարդիկ աշնանը լցնում էին չոր ծղոտի մեջ, որպեսզի ձմռան ընթացքում այն դեղնի և հասնի:

Խնձորի պահպանման տեխնոլոգիան

Խնձորը պտուղներից ամենաերկար պահպանվողն է: Հայաստանի պայմաններում ժամանակից շուտ հասած պտուղները չեն պահպանվում, դա կախված է նրանց քիչ քանակության, ցածր պահունակության հետ: Աշնանային խնձորի տեսակներն ավելի երկար են պահպանվում: Որոշ սորտեր կարելի է պահել մինչև հունվար: Ուշահաս սորտերը պիտանի են երկարատև պահպանման համար, դրանք հավաքում են ոչ լրիվ հասած վիճակում և սառնարանային պահպանման ժամանակ ձեռք են բերում բնորոշ հատկանիշներ: Կախված պտղի տեսակից, կիրառման տեխնոլոգիայից և սորտից՝ պահպանման ժամկետը կարող է լինել 6-8 ամիս, մինչև անգամ 1 տարի:

Խնձորի պահպանման համար օգտագործվում են 250կգ տարողությամբ բեռնարկղեր, որոնց ներսում կա պոլիէթիլենային ներդիր, անկյուններում տեղադրվում են ածխաթթու գազի և էթիլենի կլանման նյութեր:

ԽԱՁՈՐԵՆՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԵՎ

ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՊՐԻՍՏԻՆ



Հիվանդությունների նկատմամբ կայուն, վաղահաս սորտ է: Պտուղները դեղին են և ունեն շաքարի բարձր պարունակություն: Պտուղը սեղմված տեսք ունի, խրթխրթան ամուր պտղամսով, քաղցրահամ է: Սառնարանային պայմաններում հնարավոր է պահել մոտ երկու ամիս: Ծառը խոշոր է, հիվանդությունների նկատմամբ դիմացկուն, սակայն բակտերիալ այրվածքների նկատմամբ զգայուն է: Հասունացման սկիզբը հուլիսի առաջին տասնօրյակն է: Հասունացած պտուղները թափվում են: Այս սորտը լավ փոշոտիչ է տարբեր ժամկետներում ծաղկող սորտերի համար:



ԼԻԲԵՐՏԻ

Միջին չափի աղանդերային խնձորի սորտ է: Պտուղը դեղին հիմնագույնի վրա, ունի 90% կարմիր գունավորում: Ծառը խոշոր է, ուժեղ ճյուղավորված, պտղաբերում է առանց պարբերականության: Պահպանման ենթակա է մինչև փետրվար ամիսը: Բույրը պահպանման ընթացքում դառնում է ավելի ինտենսիվ: Տարատեսակ հիվանդությունների նկատմամբ ամենադիմացկուն սորտն է (դիմացկուն է խնձորենու քոսի, պտղատուների բակտերիալ այրվածքի, միլդիուի նկատմամբ):

Ցրտադիմացկուն է, առատ պտղաբերման ժամանակ պտուղները մանրանում են, այդ իսկ պատճառով պետք է նոսրացնել, որ պտուղները լինեն ավելի խոշոր: Հասունացման ժամանակահատվածը սեպտեմբերի վերջն է: Վաղ ծաղկող սորտ է, փոշոտիչ է հանդիսանում այլ ժամկետներում ծաղկող սորտերի համար:

ԷՆԹԵՐՈՐԱՅՍ



Ուշահաս է, պտուղներն ունեն մուգ կարմիր գունավորում, դրանք լինում են միջինից խոշոր չափերի: Ծառը խոշոր է, սաղարթը տարածվող, ամենամյա պտղաբերմամբ: Դիմացկուն է ալրացողի, խնձորենու ժանգի, բակտերիալ այրվածքի, խնձորենու քոսի դեմ: Այս սորտն ունի հանգստի երկար շրջան (աչքի է ընկնում ուշ ծաղկմամբ): Էնթերպրայս սորտը ևս կարող է լավ փոշոտիչ հանդիսանալ տարբեր ժամկետներում ծաղկող տեսակների համար:

ԳՈԼԴԲԱՇ



Քաղցր համի և խրթխրթան պտղամսի շնորհիվ այն ունի բարձր պահունակություն, կարելի է պահել 10-11 ամիս: Այս սորտը դիմացկուն է պտղի կտրելուց հետո օքսիդացման ժանգոտման նկատմամբ: Ծառն ուղղաձիգ է և ունի կիսանշտարի տեսք: Դիմացկուն է բակտերիալ այրվածքի, միլդիույի, քոսի նկատմամբ: Հասունանում է <<Ֆուջիից>> հետո և խորհուրդ չի տրվում հյուսիսային ու լեռնային շրջաններում մշակման համար: Հասունացման ժամանակահատվածը հոկտեմբերի սկիզբ, նոյեմբերի վերջին է, պտուղը ոսկեգույն է: Լավ փոշոտիչ է ուշ ծաղկող սորտերի, նաև վեգետացիայի կեսերին ծաղկող սորտերի համար:

ՖԼՈՐԻՆԱ



Այս սորտը դիմացկուն է շատ հիվանդությունների նկատմամբ, կայուն է նաև քոսի նկատմամբ: Հասունանում է ուշ աշնանը: Պտուղները միջինից խոշոր են, քաղցր, ունեն մուգ կարմիր գույն, համեղ են և ունեն անուշ բույր: Պտղամիսը սպիտակադեղնավուն է, խրթխրթան, հյութալի, թույլ թթվաշ: Ունի բարձր պահունակություն:

ԴԵՅԲԵՅԿ ՖՈՒՋԻ



<<Ֆուջի>> վաղահաս տարբերակն է: Պտուղները խոշոր են, պտղի մակերեսի 60%-ը ունի կարմրանարնջագույն գունավորում: Հասունանում է սովորական <<Ֆուջի>> 6-8 շաբաթ շուտ և սեպտեմբերի սկզբին կարելի է հավաքել բարձրարժեք պտղի բերք: Միջահաս սորտ է, ծաղկում է սովորականից ավելի ուշ և լավ փոշոտիչ է տարբեր ժամկետներում (վաղ, միջին, ուշ) ծաղկող տեսակների համար:

ԳԵՅԼ ԳԱԼԱ



Պտուղը 90-100% կարմիր է, մուգ կարմիր գծերով: Հասունացման ժամանակահատվածը սեպտեմբեր ամիսն է: Գեյլ Գալան կարմիր Գալայի նոր, բարեփոխված տարբերակն է: Պտղի չափը, համային հատկությունները համադրելի են մյուս Գալա տեսակների հետ: Այս սորտի պտուղներին բնորոշ է քաղցր համը, ամրությունը, խրթխրթան են և ունեն հյութալի պտղամիս: Գեյլ Գալա սորտը ուշ է ծաղկում, ունի երկար հանգստի շրջան: Խնձորենու ավելի վաղ և ուշ ծաղկող սորտերի համար կարող է հանդիսանալ փոշոտիչ: Պահունակ է:

ՖՈԼԶԻ



Միջին աճեցողության, երկար ճյուղեր առաջացնող սորտ է: Դիմացկուն է քոսի, բավական դիմացկուն է նաև ալրացողի նատմամբ: Ծաղկման շրջանը երկար, միջահաս սորտ է: Պտուղներն օժտված են գերազանց համային հատկանիշներով, քաղցր են, խրթխրթան, հյութալի, պտղամիսը սերուցքագույն է: Հասունանում է հոկտեմբերի վերջին: Պահունակությունը տևական է, պահպանման ընթացքում պտղամիսը չի փափկում:

ՊՐԻՄԱ



Միջին աճեցողության բույս է: Նրա սաղարթը չափավոր տարածվող է: Բնորոշ է երկար ծաղկման շրջանը: Դիմացկունություն է ցուցաբերում ալրացողի, քոսի, բակտերիալ այրվածքների նկատմամբ:

Պտուղները միջին չափի են, գրավիչ կարմիր գույնով, հյութալի են, խրթխրթան, ունեն մի փոքր թթվաշ համ: Հասունանում է <<Ջոնաթանից>> երկու շաբաթ շուտ: Պահունակությունը տևական չէ:

ԸՐԼԻ ԳՈԼԴ



Պտուղները համաչափ են, միջինից խոշոր, լինում են կլոր-ձվաձև: Հասունացման ժամանակահատվածը ընկած է օգոստոսի կեսերից մինչև օգոստոսի վերջ, խրթխրթան են: Ունեն ոսկեգույնից դեղին գունավորում, հարթ մաշկ, բնորոշ է յուրահատուկ համր: Պտուղներն ամուր են, թթուների բարձր պարունակությամբ: Պտղաբերում է ամեն տարի: Ինքնափոշոտվող է և լավ փոշոտիչ այլ սորտերի համար: Պահունակ է:

ՕՈՒԹԸՄ ՌՈԶ ՖՈՒԶԻ



<<Ֆուջիի>> բարելավված տարբերակն է, որը պահպանել է բնօրինակի լավագույն հատկանիշները: Պտուղները խոշոր են, ամուր դեղնավուն ֆոնի վրա կարմիր գունավորմամբ: Հասունանում է նոյեմբերի սկզբներին: Ծաղկում է համեմատաբար ուշ, հանդիսանում է փոշոտիչ վաղ, միջին, ուշ ժամկետներում ծաղկող սորտերի համար:

ԶԵՐՍԵՅՄԱԿ



Պտուղները միջինից խոշոր են, կլոր, համաչափ: Պտղամաշկի 80%-ը կարմիր է, իսկ ենթամաշկը՝ ծղոտագույն: Պտղամիսը սպիտակ է, ամուր, խրթխրթան, հյութալի, թթվաշաքարոց: Ազատ աճող սաղարթով, ամենամյա պտղաբերող, բերքատու ծառ է, դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ: Այն հասունանում է կախված մշակության տարածքից հուլիսի վերջերից օգոստոսի կեսերն ընկած ժամանակահատվածում: Փոխադրունակ է, շուկայում ունի մեծ պահանջարկ:

ԿՎԻՆՏԻ



Պտուղները միջին չափի են, համեմատաբար համաչափ, կլորավուն և երկարավուն-կոնաձև, հարթ մաշկով: Պտղի գունավորումը կանաչադեղնավուն է՝ մուգ կարմիր թշով: Պտղամիսը կանաչավուն է սերուցքային երանգով, խիտ, հյութալի, թթվաշաքարոց, համեղ: Փոխադրունակությունը միջին է, պահունակությունը մինչև 10 օր: Ծառերը շուտ են սկսում պտղաբերել, պտղաբերման պարբերականություն չի նկատվում: Չորադիմացկուն է և դիմացկուն է շոգի նկատմամբ, սակայն միջին դիմացկունություն ունի ցրտի նկատմամբ: Կվինտի սորտը դիմացկուն է ալրացողի և զգայուն է քոսի նկատմամբ:

ԷԼՍԹԱՐ



Լայնորեն տարածված աղանդերային սորտ է: Պտուղները դեղնակարմիր են, շատ համեղ՝ <<մեղրահամ>>, հյութալի են: Պտղամիսը կիտրոնագույն է, խրթխրթան: Գոլդեն Դելիշեսը նրա ծնողական ձևերից է, որից ժառանգել է մի շարք դրական հատկանիշներ:

ՌԵՆԵՏ ՍԻՄԻՐԵՆԿՈ



Ձմեռային սորտ է, ունակ է առաջացնելու բարձր շիվեր: Պտուղները խոշոր են, բարձր, կոնաձև կամ տափակ, լավ ամրացված ծառերին: Այս սորտի պտուղները ունեն կանաչ գույն, սակայն հասունանալիս ստանում են ծղոտադեղին գույն, փայլուն են, սպիտակ ենթամաշկի վրա կան մանր կետեր: Պտղամիսը սպիտակավուն կանաչ, հյութալի է, համեղ, թթվաշաքարոց և ունի թույլ բույր: Պտուղները հավաքում են սեպտեմբերի վերջից նոյեմբերի սկիզբը, օգտագործում սկսած նոյեմբերի կեսերից: Սորտը չորադիմացկուն է և քամեդիմացկուն: Դիմացկունությունը թույլ է բրդապատ լվիճի նկատմամբ: Խոնավ վայրերում պտուղները վարակվում են քոսով:

ԳՈԼԴԵՆ ԴԵԼԻՇԵՍ



Խնձորի տեսակներից երկարատև պահպանման են դնում Գոլդեն Դելիշեսը: Լավագույն ձմեռային սորտերից է: Պտուղները խոշոր են, լայն, կոնաձև, գեղեցիկ, փայլուն, ոսկեգույն, նրանց վրա կան մանր կետեր, իսկ պտուղների զանգվածը կազմում է 150-160գ: Պտղամիսը սերուցքային է, միջին ամրության, օժտված հիանալի համային հատկություններով: հասունանունանում է հոկտեմբերի սկզբին, սակայն սառնարանային պայմաններում պահում են մինչև մարտ, որից հետո պտուղները թառամում են: Լավ փոշոտիչ է խնձորենու այլ սորտերի համար: Ունի միջին դիմացկունություն ցրտերի և ալրացողի նկատմամբ:

ՕՐԵԳՈՆ ՍՓԸՐ



Պտուղները շատ գեղեցիկ են, ծառը մեծ է, տերևախիտ, կարող է աճել անբերրի հողերում, դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ, վաղահաս է:

ԱՆՏՈՆՈՎԿԱ

Հնագույն Ռուսական սորտ է: Ենթադրվում է, որ առաջացել է անտառային վայրի խնձորենուց: Լայնորեն տարածված էր ՍՍՌՄ-ում: Այս սորտը Հայաստանում տարածված է գրեթե ամենուրեք, հատկապես Շիրակի, Լոռիի, Սևանի գոտիներում: Հանդիպում են Անտոնովկա բաժականման, Անտոնովկա սպիտակ և Անտոնովկա սովորական՝ 800 գրամանոց տեսակները: Ծառերի արտաքին տեսքով դրանք միանման են, սակայն պտուղներով տարբեր:



Շրջանացված է բարձր լեռնային և կենտրոնական գոտիներում:

Ծառը մեծ չափերի է հասնում առանձնապես հարթավայրի գոտիներում, ուր պսակը լայն բրգաձևից, ինչպիսին նա լինում է, անցնում է կիսակլոր ձևի: Հարթավայրի գոտիներում ծառերը լինում են 7-8մ բարձրության, իսկ լայնությունը կազմում է 6-7մ: Ճյուղերը սուր անկյան տակ են բաժանվում: Բնի և բազմամյա ճյուղերի կեղևը մուգ է մոխրադարչնագույն, խորդուբորդ: Միամյա շվերը մուգ են կարմրադարչնագույն, միջին թավոտ: Ոսպնյակները խոշոր են, օվալ, խիտ դասավորությամբ:

Տերևաբողբոջները միջին են, բուր, կոնաձև, դարչնագույն, խիստ թավոտ:

Տերևները խոշոր են՝ 10սմ x 8սմ էլիպսաձև, կարճ սրված սղոցակրկնատամնավոր եզրերով, փայլատ, խորդուբորդ, ներքին կողմում խիստ թավոտ: Տերևակիցները խոշոր են, նշտարաձև:

Ծաղիկը խոշոր է, ապսեաձև: Ծաղկաբույլը կոմպակտ է 6- ական ծաղիկներով, շրջապատված 6 կանաչ տերևկիներով: Կոկոնը օվալ է, վարդագույն: Բաժակը փոքր է, զանգակաձև, խիտ թավոտ: Բաժակաթերթիկները միջին են, սեպաձև, աստղաձև դասավորությամբ, խիտ թավոտ: Պսակաթերթիկները թեթևակի գոգավոր են, բացվելուց հետո՝ սպիտակ: Վարսանդն առեջներից բարձր է:

Հայաստանում հանդիպող Անտոնովկայի տեսակները խոշոր են, սակայն պտուղները ձևով, գունավորությամբ և համով տարբեր են: Սպիտակի շրջանի Նալբանդ, Ախուրյանի շրջանի Հացիկ գյուղերում հանդիպում է բաժականման Անտոնովկան: Լենինականի այգեգործություն սիրողները բաժականման Անտոնովկան Վորենեժից են բերել: Բաժականման Անտոնովկայի պտուղները համաչափ են, լայն գլանաձև, փայլուն, դեղին մաշկով և նարնջագույն թշիկով:



Պտղամիսը մանր հատիկավոր է, ամուր, հյութալի, հաճելի թթվաշաքարոց:

Սպիտակի, Կիրովականի, Իջևանի, Ստեփանավանի, Վանի և Մարտունու շրջաններում այնպիսի տեսակներ են աճում, որոնք ունեն կողքերից սեղմված տեսք,

սպիտակադեղնավուն գույն, հատած կոնի տեսք, ավելի փուխր, խոշորահատիկ պտղամսով և համեմատաբար բարձր թթվությամբ:

Մյուս տեսակը հանդիպում է Հոկտեմբերյանի և Աբովյանի շրջաններում ու աչքի է ընկնում ավելի բաց, սպիտակավուն գույնով և պտուղների թույլ արտահայտված կոդավորությամբ:

Ափսեն խորն է, կոդավոր: Բաժակը միջին է, կիսաբաց: Ձագարը խորն է, լայն շատ բարակ շերտով ժանգապատ, ըստ որում ժանգը ձագարի սահմաններից դուրս է գալիս: Պտղակոթը կարճ է, ձագարի սահմաններից դուրս չի գալիս և թավոտ է: Մաշկը հաստ է, փայլուն, համարյա սպիտակ, մեծ քանակի ենթամաշկային կետերով, շատ հոտավետ է: Ենթաբաժակային խողովակը ձագարածն է, մեծ: Սերմնախցիկները մեծ են, փակ, երբեմն բաց, խորդուբորդ մակերեսով: Առանցքը բաց է: Սերմերը լիքն են, ձվաձև, դարչնագույն: Պտղամիսն սպիտակ է, փուխր, թթվաշաքարոց:

Ծառը երկարակյաց է, ցրտադիմացկուն: Պտղաբերության անցում է 8-10 տարեկան հասակում: Բերքի աճը դանդաղ է: Լեռնային գոտում լիահասակ ծառից 300-400կգ բերք է ստացվում, իսկ հարթավայրում 600կգ: Պարբերականությունն ուժեղ է արտահայտվում:

Լեռնային շրջաններում Անտոնովկան հանդիսանում է ուշ աշնանային սորտ, նախալեռնային շրջաններում աշնանային, իսկ ցածրադիր շրջաններում ամառային սորտ: Ճերմակապտուղ Անտոնովկայի պտուղները պահպանվում են մինչև դեկտեմբեր, փոխադրունակ չեն: Պիտանի են վերամշակման, առանձնապես կոմպոտների, ժելեների, թթվի համար: Բաժականման Անտոնովկայի պտղի որակը շատ բարձր է, այդ իսկ պատճառով նրա արտադրությունը խիստ արժեքավոր է:

Լավագույն փոշոտիչներն են` Բորովինկա նոր, Տիտովկա, Ռենետ լիմոնի, Ռենետ Միմիբենկոյի, Չելինի, Ռենետ կասելի, Ռենետ Բաումանի, Բոյկեն, Բելֆյոր կիտայկա, Կալվիլ ձյունային և Պեպինկա լիտվական սորտերը:

Աստրախանի կարմիր

Հանդիպում է Ախուրյանի, Դիլիջանի, Ստեփանավանի, Իջևանի շրջանների այգիներում: Շրջանացված է բոլոր գոտիների համար:

Ծառը միջին մեծության է: Պսակը խիտ է, կլորավուն: Կեղևը ճեղքված է, կարմրագորշ: Միամյա շիվերն ուղիղ են, դարչնակարմիր, առանձնապես շիվերի ծայրերում խիստ թավոտ: Միջհանգույցները միջակ են: Ոսպնյակները մանր են, օվալ, խիտ դասավորված: Տերևաբողբոջները միջին են, սեպաձև, հաված, խիտ թավոտ: Պտղաբողբոջները մանր են, սեպաձև, մուգ դարչնագույն, միջին թավոտ:

Տերևները միջին են՝ 9,5սմ x 10սմ, լայն էլիպսաձև, գլխավոր ջղի ուղղությամբ թեթևակի դեպի վեր ծոված, սուր գագաթով, անհարթ, գորշականաչ, ներքին կողմը մոխրականաչ:

Ջղավորությունը նոսր է: Տերևակիցները փոքր են, նեղ նշտարաձև:

Ծաղիկները խոշոր են, ափսեաձև: Ծաղկաբույլը կոմպակտ է, 5-6 ծաղկի շրջապատված 6 կանաչ տերևիկներով: Բաժակը միջին է, զանգակաձև, թավոտ: Բաժակաթերթիկները միջին են, սեպաձև, սրված, ոչ խիտ թավոտ: Պսակաթերթիկները խոշոր են հակառակ ձևով, գոգավոր, բացվելու սկզբին վարդագույն հետո՝ սպիտակ: Վարսանդը առեջներից բարձր է: Սոնակները 5մմ բարձրությամբ միակցված են: Ծաղկակոթը միջին երկարության է, բաց կանաչ, խիստ թավոտ:



Պտուղները միջին են՝ 3,5սմ x 5,5սմ, 70-80գ քաշով, տափակ-կլորավուն, թույլ արտահայտված կողավորությամբ: Ձագարը խորը չէ, նեղ է, թեթևակի ժանգապատ: Պտղակոթը տարբեր երկարության է, ծայրում հաստացած, ձագարից դուրս, թեքված, ձագարից դուրս գցված, ձիթականաչ: Ափսեն խորը չէ, երբեմն համարյա բացակայում է: Բաժակաթերթիկները միջին են, փակ: Մաշկը ամուր է, փայլուն, դեղնականաչ, պատված մարմարային կարմիր գույնով:



Ենթամաշկային կետերը խոշոր են, սպիտակ, կլորավուն, ոչ խիտ դասավորված: Պտուղն ամբողջովին պատված է թխագորշ մոմային փառով: Ենթաբաժակային խողովակը փոքր է, ձագարաձև: Մերմերը միջին են, դարչնագույն: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, ունի թթվաշաքարոցի համ և անուշ բույր:

Ծառերը միջին ցրտադիմացկուն են և համեմատաբար չորադիմացկուն:

Բերքատվության անցնում է տնկելուց 5-6 տարի հետո: Պտղաբերում է պսակի ներսում՝ գերազանցապես երկար պտղաշիվերի վրա: Բերքատվությունը միջին է՝ ծառից 30-40կգ:

Պտուղները նայած տեղի բարձրությանը, հասունանում են հուլիսի սկզբից մինչև վերջ և պահվում 7-10 օր:

Լավագույն փոշոտիչներն են՝ Բորովինկա, Սույսլեպսկոյե, Մեկինտոշ, Ռենետ Սիմիրենկո, Ստոլթովկա, Ռենետ Օբերդիկա սորտերը:

Սորտի արժանիքներն են՝ ծառերի հարաբերական ցրտադիմացկունությունը, չորադիմացկունությունը, պտղակերից թույլ վնասվելը, համային լավ հատկանիշները և պտուղների փոխադրունակությունը:

Թերություններն են՝ պտուղների անհամաչափությունը, ոչ բարձր բերքատվությունը:

ԱՐԿԱՂ ՁՄԵՌԱՅԻՆ

Քիչ տարածված տեսակ է: Հայկական ՍՍՌ-ում տարածված էր Սևանի, Շիրակի, Ապարան, Հրազդանի գոտիներում: Հանդիպում էր նաև Թալինի հողատարածությունների երիտասարդ այգիներում:

Ծառերը մեծ են, գնդաձև ու խիտ պսակով:



Բնի և հիմնական ճյուղերի կեղևը փայլուն է, բաց դեղին, մոխրագույն փառով պատած: Լիահաս ծառերի կեղևը ճաքճքվում է և առաջացնում են երկայնակի շերտեր: Միամյա շիվերը ուղիղ են, մուգ դարչնագույն, միջին երկարության միջհանգույցներով: Ոսպնյակները միջին են, նոսր, օվալ: Տերևաբողբոջները մանր են, հաված, բուր, կոնաձև, Թավոտ: Պտղաբողբոջները խոշոր են, կոնաձև, մոխրադարչնագույն, խիստ թավոտ: Տերևները միջին են 9,4սմ x 6,5սմ, ձվաձև, ծոված, կրկնաատամնավոր եզրերով, ամուր, մուգ կանաչ, փայլուն, ներքին կողմում մոխրավուն, նոսր ջղավորությամբ, խիստ թավոտ: Տերևեակոթը միջին երկարության է, բաց կանաչ, տերևակիցները փոքր են, նեղ: Ծաղիկները միջին մեծության են, ծաղկաբույլերում շրջապատված 10 մանր, կանաչ տերևիկներով: Ծաղկակոթը 2,8սմ երկարության է, բաց կանաչ, թավոտ: Բաժակը փոքր է, զանգակաձև, ուժեղ թավոտ: Բաժակաթերթիկները նշտարած են, ետ թեկված, կարմրավուն վերջավորությամբ: Պսակաթերթիկները խոշոր են, ձվաձև, կոկոնում մուգ վարդագույն, բացվելիս՝ վարդագույն:

Պտուղը միջին է 6,7սմ x 6,7սմ, ամենամեծ պտուղների զանգվածը 120-160գ է, միջիններինը 60-80գ, լայն օվալ: Պտղակոթը կարճ է, հաստացած վերջավորությամբ, ուղիղ, բաց կանաչ,



դուրս ցցված, քիչ թավոտ: Ձագարը խորն է, լայն, մսոտ, թույլ արտահայտված չորսական ելուստներով: Ափսեն խոր չէ, լայն է, ծալքավոր մակերեսով: Բաժակը փոքր է, փակ: Բաժակաթերթիկները կոնաձև են, ունեն բաց կանաչ գույն: Մաշկն ամուր է, յուղոտ, ոսկեգույն-սերուցքագույն, նոսր, կարճ զովերով պատած: Ենթամաշկային կետերը մանր են, սպիտակավուն, կլորավուն և ունեն խիտ դասավորություն: Մերմնախցիկները փոքր են, փակ: Մերմերը շատ են,

ձվաձև, մուգ դարչնագույն: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, նուրբ, միջին, հյութալիությամբ, շատ քաղցր, օժտված է թույլ թթու համով, բուրմունքը մեղրային է և ուժեղ: Պտուղը պարունակում է շաքար-8,30%, թթուներ-0,11%, դաբաղանյութեր-0,09%, պեկտին-0,81%:

Ծառը ցրտադիմացկուն է, ծաղիկները 4,5-6,4⁰-ում 30-68% վնասվածքներ են ունենում: Տնկարանում աճի ուժը զգալի է: Շիվառաջացման ընդունակությունը բարձր է, որի շնորհիվ ծերատելիս տնկարանի երկրորդ դաշտում ստանդարտ տնկիներ են ձևավորվում: Պտղաբերության անցնում է տնկելու երրորդ տարում: Բերքի աճը հավասարաչափ է: Յոթ տարեկան հասակում սորտն զգալի բերք է տալիս: 16-17 տարեկան հասակում մեկ ծառի բերքը հասնում է 200կգ, իսկ 20 տարեկանում՝ 300կգ: Պտղաբերության պարբերականությունը թույլ է արտահայտված: Պտղաշիվերը դասավորված են 2-8 տարեկան հասակի բնափայտի վրա: Ծառը պտղաբերում է հիմնականում չորս տարեկան պտղաշիվերի վրա: Պտուղները ՌՄՖՍՌ-ում հասունանում էին ուշ աշնանը, մինչդեռ Հայաստանի պայմաններում, նույնիսկ բարձր լեռնային գոտիներում՝ օգոստոսի վերջին:

Պտուղները շատ նուրբ են, ուստի պետք է խնամքով քաղել և դասավորել: Փոխադրունակությունն անբավարար է, լավ է թարմ վիճակում օգտագործման համար: Պիտանի են նաև չորացնելու, պյուրեի ու ջեմի համար:

Լավագույն փոշոտիչներն են՝ Կուլոն կիտայկա, Անիսոնի կալվիլ, Շաֆրան կիտայկա, Բելֆյոր-կիտայկա, Պեպին շաֆրանի, Տիտովկա, Բոլշակ, բորովինկա նոր, Բորսդորֆ-կիտայկա, Սինապ Միչուրինի, Կոմսոմոլեց, Կամդիլ կիտայկա, Բեսսեմյանկա Միչուրինի սորտերը:

Սորտի արժանիքներն են՝ ծառի բարձր ցրտադիմացկունությունը, պտղաբերության վաղ անցնելը, պտուղների հավասարամեծությունը, դիետիկ ու տեխնոլոգիական որակը:

Թերությունն է՝ պտուղների միջին որակը:

ԱՔՅԿԱ

Տեղական սորտ է, տարածված է Երևանի և Արմավյանի այգիներում հատուկենտ ծառերի ձևով:

Ծառերն ունեն միջին աճեցողություն, 5-6մ երկարություն, 3-4մ լայնություն, կլորավուն սաղարթ և փոված ճյուղեր, երբեմն լայն բրգաձև պսակ: Կմախքային ճյուղերը ուղեկցողի հետ կազմում են 65-70⁰ անկյուններ: Բնի կեղևը խիստ ճաքճքված մոխրադարչնագույն է, բազմամյա ճյուղերինը՝ դարչնագույն, 1-2 տարեկան ճյուղերինը՝ կանաչ դարչնագույն, ընձյուղներինը՝ կանաչ կարմրավուն, ծածկված բազմաթիվ կետանման ոսպնյակներով: Վեգետատիվ բողբոջները մանր են, ձվաձև, սուր, կանաչ:

Տերևները միջին մեծության են, ձվաձև, քիչ կորվածությամբ, սուր ծայրով, մանր ատամնավոր եզրերով, մուգ կանաչ, ստորին մակերեսը մոխրականաչ: Տերևակոթունը միջին հաստության է, 2-3սմ երկարությամբ, կանաչ:

Պտղաբողբոջները խոշոր են, էլիպսաձև, շագանակագույն: Ծաղկակոկոնները խոշոր են, լայն, օվալ: Պսակաթերթիկները վարդագույն են: Բաժակաթերթիկները, ձվաձև, կանաչ, թավոտ են:

Պտուղները միջին մեծության են, 70-100գ քաշով, տափակ-կլորավուն, երբեմն էլ կլոր կամ կոնաձև: Մաշկը հաստ է, կոպիտ, կանաչ դեղնավուն, համարյա լրիվ վառ կարմիր շառագունած:

Ենթաբաժակային խողովակները կարճ է, լայն, իսկ խցիկները կիսաբաց: Սերմերը շատ են, տափակ, ձվաձև, թույլ սրածայր, շագանակագույն, 9-10-ական հատ: Պտղամիսը սպիտակադեղնավուն է, խոշոր հատիկավոր, փխրուն, միջին հյութալի, քաղցր, թույլ թթվությամբ, ունի հաճելի համ:

ԲԵԼՖԼՅՈՐ-ԿԻՏԱՅԿԱ

Ծառը մեծ է, գնդաձև, տարածված, խիտ պսակով: Բնի և կմախքային ճյուղերի կեղևը ողորկ է, փայլուն, դեղնագորշ: Միամյա շիվերը ծնկաձև են, բաց դարչնագույն, թավոտ: Միջհանգույցների երկարությունը 3-3,5սմ է: Ոսպնյակները կլորավուն են, միջին, խիտ դասավորված:



Տերևաբողբոջները միջին են, կլորավուն, կոնաձև, քիչ թավոտ: Պտղաբողբոջները միջին են, դարչնագույն, միջին թավոտ:

Տերևը խոշոր է՝ 3,5սմ x 10սմ, կլորավուն, ձվաձև, եզրերը սղոցատամնավոր: Թիթեղը հաստ է, անհարթ, թխականաչ, ներքին կողմը բաց կանաչ, թավոտ: Ջղավորությունը խիտ է, հավասարաչափ: Կորունը միջին երկարության է, հաստ, թավոտ: Տերևակիցները մարն են, նշտարաձև:

Ծաղիկը խոշոր է, բաժակաձև, ծաղկաբույլը 4-6 ծաղկանի: Պսակաթերթիկները կլորավուն են, դյուրաթեք: Բաժակը խոշոր է, ուժեղ թավոտ: Բաժակաթերթիկները խոշոր են, կոնաձև:

Պտուղները 6,3սմ x 7,2սմ են, խոշորները լինում են 200գ, միջինները՝ 120-160գ, կլորավուն, օվալ են, թույլ արտահայտված կողավորությամբ: Պտղակոթը 0,3սմ լայնության և 2,7սմ երկարության է, թույլ թավոտ: ձագարը խորն է, կնճռոտ, առանց ժանգապատման: Ափսեն խորն է և լայն: Բաժակը փակ է, բաժակաթերթիկները միջին են, երկարավուն-կոնաձև, թավոտ: Մաշկը բարակ է, կիսափայլուն, մոխրադեղին: Թուշը բաց վարդագույն է, գծերի ձևով, ծածկում է պտղի $\frac{3}{4}$ -ը: Հայաստանի հարուստ սևահողերում և բարձր, բաց տարածություններում Բելֆլյոր-Կիտայկան ծածկված է վառ վարդագույն կարմրությամբ: Ենթամաշկային կետերը մանր են, հազիվ նկատելի: Ենթամաշկային խողովակը խոշոր է,

երկար, կոնաձև: Սերմնախցիկները բաց են: Սերմերը խոշոր են, կլորավուն, բաց դարչնագույն: Պտղամիսը սպիտակ է, հյութալի, նուրբ, հաճելի գինեթթվային համով, օժտված է լավ վարդաբուրմունքով: Պտուղներն իրենց մեջ պարունակում են 11,2% շաքար, 0,22% թթուներ, 0,11% դաբադանյութեր, 0,27% պեկտին:



Բելֆյոր-Կիտայկան Հայաստանի լեռային գոտում իրեն հրաշալի է զգում և երևան է բերում բարձր ցրտադիմացկունություն: Անբարենպաստ ձմեռներին 2-3 տարեկան ճյուղերի միջուկի աննշան վնասվածքներ են նկատվում: Ծաղիկները 4,5-6,9⁰-ում վնասվում են 68%-ով: Տնկարանում աճը լավ է, սաղարթավորման և ճյուղագոյացման ընդունակությունը բարձր է: Ծառերը պտղաբերության անցնում են տնկելուց 3-4 տարի հետո: Բերքի աճման տեմպը ուժեղանում է 9-10 տարեկան հասակից: Պտղաշիվերը կազմակերպվում են 2-8 ամյա բնապայտի վրա: Հիմնականում պտղաբերում է երկար պտղաշիվերի վրա: 15-16ամյա ծեռերի առավելագույն բերքը լինում է 124կգ, լրիվ բերքատվության անցածինը 250կգ:

Հայաստանի բարձր լեռնային գոտիների պայմաններում պտուղները հասունանում են օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին: Հասարակ պահեստային պայմաններում պահվում են 1-2 տասնօրյակ:

Լավագույն փոշոտիչներն են՝ Պեպին շաֆրանի, Անիսոնի Կալվիլ, Արկադ ձմեռային, Անտոնովկա, Տիտովկա և Սինապ միջուրինի սորտերը:

Սորտի արժանիքներն են՝ բարձր ցրտադիմացկունությունը, լավ բերքատվությունը, համի բարձր հատկանիշները, պտուղների միատարրությունն ու գեղեցկությունը:

Թերություններն են՝ բարձր բերքատվության ուշ անցնելը և պտուղների որոշ մասի անժամանակ թափվելը:



ՍԱԼՈՐԵՆԻ

Ծառեր են կամ թփեր՝ 3-12մ բարձրության: Տերևները պարզ են, էլիպսաձև կամ նշտարաձև, հարթ մակերեսով, ատամնաեզր, հերթադիր: Ծաղկաբույլերում՝ ծաղիկները սպիտակ կամ վարդագույն, մեկական կամ 5-ական: Պտուղը մսալի, միասերմ կորիզապտուղ է, ձվաձև կամ կլոր: Պտուղների զանգվածը 6-100գ է, դեղին, կանաչ, կարմիր կամ կապտասև՝ երկնագույն մոմային փառով: Հայտնի է 30 տեսակ: Հայրենիքը համարվում է Կովկասը, Փոքր Ասիան և Հյուսիսային Իրանը: Տարածված է Արևմտյան Եվրոպայում, Հնդկաստանում, Արևելյան Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում և Աֆրիկայում, Մոլդավիայում, Ուկրաինայում, Կովկասում, Միջին Ասիայում և այլն: Մշակության մեջ առավել տարածված է սովորական կամ ընտանի սալորենին (*Prunus domestica*): Հայաստանում մշակվում է ընտանի սալորենի (դամբուլենի), հյուսիսարևելյան շրջաններում հանդիպում է նաև մամխին: Հայաստանում մշակվող սալորենու ներմուծված արդյունաբերական սորտերից են Գեղձայինը, Ռենկլոդ կանաչը, Ռենկլոդ Ալտանան, Աննա Շպետը, Ջոենտ պրունը, Վիկտորիան, Հունգարասալորը: Տեղականներից առավել հայտնի են Վազիրին, Ալբուխարին, Կանաչկենին, Դեղին դամբուլը, Սև դամբուլը: Հայաստանում հայտնի են 3 վայրի տեսակներ՝ փշավոր ու սովորական սալորենիները և մամխին: Տարածված են Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի, Գեղարքունիքի և այլ մարզերում: Աճում են ստորինից մինչև վերին լեռնային գոտու թփուտներում, անտառեզրերին, անտառներում, առաջացնում մացառուտներ: ՀՀ-ում հայտնի են 3 վայրի տեսակներ՝ փշավոր ու սովորական սալորենիները և մամխին: Աճում են ստորինից մինչև վերին լեռնային գոտու թփուտներում, անտառեզրերին, անտառներում, առաջացնում մացառուտներ: ՀՀ գրեթե բոլոր մարզերում մշակվում են ընտանի սալորենին (դամբուլենի) և շլորենին, հյուսիսային շրջաններում հանդիպում է նաև մամխին:

Միամյա ընտանի սալորենու բարձրությունը 4-8մ է, ճյուղերը թավոտ են, շագանակագույն: Տերևները հերթադիր են, ձվաձև կամ էլիպսաձև՝ հարթ երեսով, ատամնաեզր, մուգ կանաչ: Ծաղիկները մանր են, սպիտակ: Ծաղկում է ապրիլ-մայիսին: Պտուղը կլորավուն, ձվաձև, կանաչ, դեղին, կարմիր, սև, հյութալի կորիզապտուղ է, զանգվածը՝ 30-50գ: Պարունակում է չոր նյութեր, շաքարներ, օրգանական թթուներ, B₁, B₂, C, K, PP վիտամիններ և հանքային նյութեր: Օգտագործվում է թարմ և վերամշակված (չիր, կոմպոտ, մուրաբա, ջեմ, հյութ և այլն): Բերքատվությունը 200g/հա է: Ցրտադիմացկուն է (մինչև -30°C):

ՀՀ-ում շրջանացված են ներմուծված Աննա Շպետ, Դեղձային, Ռենկլոդ կանաչ, Վենգերկա իտալական, Վենգերկա սովորական, Ջոենտ Պրու և տեղական Սև, Խոշոր դամբուլներ, Դեղնաշլոր, Վազիրի, Կանաչկենի, Ալբուխարի և այլ սորտեր:

Սալորի մի քանի տեսակներ կան՝ կարմիր, դեղին, կապույտ, և այլն: Համեղ այս միրգը բուժիչ հատկանիշներով է օժտված: Սալորի հայրենիք է համարվում Կովկասը, Միջին Ասիան, Պարսկաստանը, Եգիպտոսը:



Սալորը օրգանիզմից հեռացնում է մաղձը՝ լեղին, և միզամուղ հատկություն ունի: Մեր օրգանիզմը մաքրում է, հեռացնում է ավելորդ ջուրը և աղը:

Սալորը խորհուրդ է տրվում ուտել հատկապես գաստրիտ, ստամոքսի խոց և տասներկումատնյա աղիի հետ կապված հիվանդություն ունեցող մարդկանց, ինչպես նաև

նրանց, ովքեր սակավարյունությամբ են տառապում: Սալորը օրգանիզմի համար հրաշալի պրոֆիլակտիկ միջոց է:

Սալորը նաև խորհուրդ է տրվում նրանց, ովքեր փորկապություն ունեն: Փորկապությունը շատ արագ թուլացնում է: Դրա համար նման խնդիրների դեպքում օրական (առավոտյան՝ սոված ստամոքսին և օրվա ընթացքում՝ չխառնելով այլ սննդի հետ) պետք է ուտել 10-12 սալոր: Թարմ սալորի քամած հյութը կարգավորում է ստամոքսի թվայնությունը: Սալորը օրգանիզմից հեռացնում է ավելորդ հեղուկը և վերացնում այտուցները: Սալորի մեջ ֆրուկտոզաներ և սախարոզաներ (բուսաշաքար) են պարունակվում: Հասած սալորի մեջ ավելի շատ հանքային նյութեր կան, քան խնձորի և տանձի մեջ:

Սալորը նաև մեծ քանակությամբ կալիում, ֆոսֆոր, նատրիում, կալցիում և պեկտին է պարունակում: Պեկտինն, ի դեպ, շատ կարևոր է հատկապես նյութափոխանակության կարգավորման համար, օրգանիզմում նվազեցնում է խոլեստերինի քանակությունը, կարգավորում է արյան շրջանառությունը, և ամենակարևորը, այն կենդանի օրգանիզմը լավագույնս մաքրում է վնասակար նյութերից:

Պեկտինն, ըստ մասնագետների, օրգանիզմի բնական սանիտարն է, որը մաքրում է ծանր մետաղների աղերը, քաղցկեղածին նյութերը:

B2 վիտամինի մեծ պարունակություն կա հատկապես սև սալորի մեջ. այս վիտամինն անհրաժեշտ է հատկապես նյարդային համակարգի ամրացման, սպիտակուցային փոխանակման համար: Նաև վիտամին P է պարունակվում, որը նպաստում է արյան մանր անոթների անցանելիությանը, և իջեցնում է արյան ճնշումը:

Ապացուցված է, որ սալորը, մասնավորապես՝ սալորաչիրը օգնում է օրգանիզմից վնասակար խոլեստերինի հեռացմանը, այդ իսկ պատճառով այն օգտակար է հատկապես այն մարդկանց, ովքեր տառապում են հիպերտոնիայով, աթերոսկլերոզով (սրտանոթների կարծրացման հիվանդություն) և լեղապարկի, ռևմատիզմ հիվանդություններով: Պետք է հիշել, որ սալորահյուրը հակացուցված է



ստամոքսահյուրի բարձր թթվայնություն ունեցող մարդկանց:

Նորածին և փոքր տարիքի երեխաների մոտ սալորահյուրը փորլուծություն և աղիներում՝ գազեր կարող է առաջացնել:

Սալորն իր մեջ պարունակվող վիտամինների միջոցով նաև

պայքարում է անքնության, հոգնածության դեմ, երիտասարդացնող և հակահինֆեկցիոն հատկություն ունի: Պրովիտամին (նախավիտամին) A-ի շնորհիվ լավացնում է տեսողությունը, օրգանիզմը պաշտպանում է տարբեր վիրուսներից, մաշկը լավացնում-էլաստիկ է դարձնում:

K վիտամինի մեծ քանակության շնորհիվ սալորը նաև արյան բաղադրությունն է լավացնում, կանխում է տրոմբոզների առաջացումը:

Աշնանը կարող եք սալորով դիետա պահպանել՝ թեթև սննդակարգին (օրական՝ 1200 կկալորիա) միացնելով 200 գրամ թարմ սալոր: 10-15 օր այս դիետան պահելուց հետո ձեր օրգանիզմը կմաքրվի, մաշկը կլավանա և մի քանի կգ քաշ կզգեք:

Ժողովրդական բժշկության մեջ սալորը հաճախ է օգտագործվում: Մեծ քանակությամբ կալիում պարունակելու շնորհիվ հիպերտոնիայով և երիկամների հիվանդությամբ տառապողներին խորհուրդ է տրվում սալորի կոմպոտ խմել:

Օրգանիզմը մաքրելու համար խորհուրդ է տրվում առավոտյան՝ սոված ստամոքսին, առանց շաքարավազի թարմ սալորահյուր խմել:

Միզափամփուշտի քարերի դեպքում խորհուրդ է տրվում օրը 2-3 անգամ 1-2 թեյի գդալ սալորենու բուսախեժ ուտել:

Երիկամների քարերը ևս բուժում էին բուսախեժի օգնությամբ: 100 գրամ սալորենու բուսախեժը խառնել 1 լիտր սպիտակ գինու մեջ: Խեժն ամբողջությամբ պետք է լուծվի գինու մեջ: Ստացված լուծույթն օգտագործեք օրը 3-4 անգամ՝ ուտելուց կես ժամ առաջ և 50մլ չափով:

Գոտկատեղի ցավերի դեպքում սալորի 25 գրամ պոչերը փոշու պես մանրացրեք, վրան լցրեք 1 թեյի բաժակ (ոչ մեծ) օղի, պահեք 7 օր, ապա դրանով մերսեք ցավող հատվածները: Շատ օգտակար են նաև սալորի տերևները:

Թեև սալորի մեջ C վիտամին շատ չի պարունակվում, փոխարենն այդ վիտամինով և ֆիտոցիդներով հարուստ են սալորի տերևները: Տերևներից և քաղախից պատրաստված թուրմով մաքրում են հին թարախակալված վերքերը:



Տերևները նաև օգտագործում են վաղ մազաթափության դեպքում. 1 ճաշի գդալ մանրացված տերևները եռացնել 1 բաժակ եռջրով, 1 ժամ թողնել և քսել մազաքմատներին: Տերևներից պատրաստված թուրմով նաև ողողում

են բերանի խոռոչը (ստոմատիտի՝ բերանաբորբի դեպքում). 20 գրամ չոր տերևները լցնել 1 թեյի բաժակ եռացրած ջրի մեջ, եռացնել ևս 15 րոպե, թողնել լավ սառչի և ողողել բերանը:

Լնդերի արյունահոսության դեպքում թարմ մանրացված տերևները պետք է լցնել չոր կարմիր գինու մեջ, 3 շաբաթ թրմել՝ ժամանակ առ ժամանակ խառնելով, ապա քամել և դրանով ողողել բերանը, լնդերը: Սալորը նաև երկաթ, յոդ, ցինկ է պարունակում: Ի դեպ, հնում սալորի ցողունի խեժը նաև օգտագործել են խոցի, կոնյուկտիվիտի բորբոքման և տեսողության լավացման համար:

Հասած սալորի մեջ սախարոզաների քանակն ավելանում է: Սալորի տարբեր տեսակներ պարունակում են 0,1-2,7 մգ/100գրամ կարոտին (նախավիտամին A): Դրանով հարուստ են հատկապես դեղին տեսակները:

Սալորը մանդարինից, նարնջից, տանձից, բալից և այլ մրգերից առանձնանում է վիտամին E-ի մեծ քանակությամբ: Իհարկե, այդ իմաստով զիջում է դեղձին և մասուրին: Իսկ վիտամին E-ն նաև երիտասարդության բնական աղբյուր է համարվում: Պտղատու մշակաբույսերը բազմանում են սերմերով և վեգետատիվ ճանապարհով:

Սերմերով բազմացումը, սովորաբար, կատարվում է սելեկցիոն նոր սորտեր ստեղծելու և արտադրության մեջ սերմնաբույս պատվաստակալներ աճեցնելու համար:

Պտղատու տեսակների սորտերի կենսաբանական-տնտեսական առանձնահատկությունները պահպանելու, դրանց միատարրությունը, ստանդարտացումն ապահովելու և մեծ քանակությամբ տնկանյութ աճեցնելու համար կիրառվում է **վեգետատիվ բազմացում**՝ մացառներով, անդալիսներով, պատվաստի բազմաթիվ ձևերով և բեղիկներով:



Մացառներով բազմացվում են խնձորենու, տանձենու, սալորենու, բալենու, տխլենու, կեռասենու տեղական ձևերը: Կտրոններով և անդալիսներով՝ հաղարջենին, կոկոռշենին, սերկևիլենին, նոնենին, թզենին, խաղողի վազը: Բեղիկներով բազմանում են խոտանման բույսերը, ինչի ամենահայտնի օրինակը ելակն է, իսկ պատվաստով՝ կորիզավոր, հնդավոր և այլ ծառատեսակները:

Գործնականում հայտնի են պատվաստի մի քանի ձևեր, աչքապատվաստ՝ քնած աչքով, աչքապատվաստ՝ աճող աչքով և կտրոնապատվաստ:

Աչքապատվաստ: Առաջացել է լատիներեն օկուլտս(աչք) բառից: Աչքապատվաստի ժամանակ պատվաստացուի վրայից կտրված բողբոջը կեղևի հետ միասին կոչվում է վահանիկ, որը տեղադրվում է պատվաստակալի վրա կատարված կեղևի կտրվածքի տակ: Պատվաստի այդ ձևը պտղատու բույսերի բազմացման ամենատարածված և արդյունավետ եղանակն է, որը մեծ կիրառում ունի հատկապես տնկարանային տնտեսություններում: Աչքապատվաստի առավելությունը մյուս ձևերի համեմատությամբ այն է, որ դա ավելի արտադրողական է, տալիս է բարձր կաչողականություն, բույսի վրա մեծ վերքեր չեն առաջանում, շուտ է տեղի ունենում վերականգնումը և պատվաստացու կտրոնների խնայողությունը մեծ է լինում:

Հիմնականում տարբերում են աչքապատվաստի երկու տեսակ՝ ա/ քնած աչքերով, որը կատարվում է օգոստոս- սեպտեմբեր ամիսներին, բ/աճող աչքերով, որը կատարվում է գարնանը՝ բույսերի հյութաշարժության ժամանակ:

Պտղատնկարաններում հիմնականում կիրառվում է քնած աչքերով աչքապատվաստը: Այս դեպքում պատվաստված աչքերը կաչում են և մնում քնած վիճակում մինչև հաջորդ տարվա գարուն: Աճող աչքերով աչքապատվաստը կատարվում է գարնանը, երբ սկսվում է հյութաշարժությունը և օգտագործվում է դեղձենու, նշենու և ծիրանենու համար, որոնք մինչև աշուն կարող են զարգանալ և հասնել սահմանված ստանդարտին:



Քնած աչքերով աչքապատվաստի կատարման ժամկետները կախված են հողակլիմայական պայմաններից, տեսակների ու սորտերի առանձնահատկություններից և պատվաստացու կտրոնների հասունացումից: Լեռնային և նախալեռնային շրջաններում քնած աչքերով աչքապատվաստը կատարվում է հուլիսի վերջից մինչև օգոստոսի վերջը, իսկ ցածրադիր գոտում՝ օգոստոսի առաջին տասնօրյակից մինչև սեպտեմբերի կեսը: Ըստ առանձին տեսակների, աչքապատվաստը կատարվում է հետևյալ հերթականությամբ՝ ծիրանենի, կեռասենի, բալենի, տանձենի, խնձորենի, սալորենի, դեղձենի:

Նախքան պատվաստի աշխատանքներն սկսելը, պետք է տնկարանի առաջին դաշտը պատվաստից 3-4 օր առաջ առատորեն ջրել, փխրեցնել և պատվաստակալների շուրջը բուկլիցը հետ տալ՝ հյութաշարժության արագացմանը և

կեղևի լավ անջատվելուն նպաստելու համար:Պատվաստի համար անհրաժեշտ է ունենալ հատուկ դանակ,կապելու նյութ(ճիլոպ),այգու դանակ, մկրատ, դույլ և սրաքար:

Պատվաստացու կտրոններն անհրաժեշտ է մթերել նախօրոք, տնկարանի մայրացու այգուց կամ ապրոքացված պտղատու այգիներից:Կտրոնները պետք է վերցնել դիմացկուն, հիվանդություններից և վնասատուներից զերծ բերքատու ծառերից:

Չի թույլատրվում կտրոններ վերցնել երիտասարդ և անհայտ սորտայնություն ունեցող ծառերից:Անհրաժեշտ է կտրոնները մթերել սաղարթի կենտրոնական մասից, ընթացիկ տարվա ուժեղ աճած շիվերից,որոնք գտնվում են լավ լուսավորության պայմաններում:Կտրոնների հաստությունը 4-5սմ-ից պակաս չպետք է լինի. վերցնելուց հետո պետք է հեռացնել տերևներ թողնելով 0.5սմ երկարությամբ տերևակոթոնները:



Պետք է ըստ սորտերի 50-ական կտրոնից խրձիկներ կապել և դնել քիչ ջուր լցված դույլերի մեջ ու ծածկել խսիրով կամ շորի կտորով:Պատվաստի ժամանակ վերցնում են կտրոնի միջին մասի աչքերը.ծայրային մասի և ներքևի աչքերը լավ զարգացած չեն լինում և տալիս են թույլ կաշոտականություն:

Պատվաստից առաջ անհրաժեշտ է բացել պատվաստակալների բուկերը և մաքրել խոնավ շորով: Պատվաստի համար պատվաստակալները պետք է լինեն առնվազն 8-10սմ հաստությամբ:Աչքապատվաստը պետք է կատարել վաղ առավոտյան և երեկոյան ժամերին,անձրևոտ ու քամոտ օրերին չի թույլատրվում աչքապատվաստ կատարել:

Աչքապատվաստի տեխնիկան հետևյալն է՝ պատվաստակալի արմատավզիկից 3-5սմ վերև հյուսիսային կողմից կատարում են T –աձև կտրվածք և դանակի բուր մասով կեղևը զգուշությամբ հետ են տանում երկու կողմերի վրա, ապա երկու մատով բռնելով վահանիկի տերևակոթոնից տեղավորում են կտրվածքի մեջ,այնպես, որ լավ նստի, որից հետո վայրակի բացված կեղևը երկու ձեռքի բուր մատներով սեղմում են դեպի աչքը և անմիջապես կապում փաթաթանյութով(ճիլոպով):

Աչքապատվաստից 7-10 օր հետո պետք է առաջին անգամ ստուգել, եթե մատով դիպչելիս տերևակոթոնը պոկվում է կամ մինչ այդ արդեն պոկվել է, իսկ աչքը կանաչ ու թարմ է, նշանակում է պատվաստը կպել է, և հակառակը, եթե տերևակոթոնը չի պոկվել և աչքը սևացել է, նշանակում է պատվաստը չի կպել:Այս դեպքում պետք է վայրակի մյուս կողմում կամ առաջին պատվաստից քիչ ներքև՝ առողջ մասի վրա կրկնապատվաստ կատարել:Երկրորդ անգամ ստուգում են առաջին ստուգումից 10-15օր հետո և այդ ժամանակ կապերն անպայման պետք է թուլացնել, որովհետև նրանք կարող են ճնշել կեղևը կամ մտնել նրա մեջ:

Կտրոնապատվաստի ձևերը: Կտրոնապատվաստը կատարում են վաղ գարնանը, նախքան բողբոջների բացվելը: Պտղաբուծության մեջ հայտնի են կտրոնապատվաստի հետևյալ ձևերը՝ կողապատվաստ,հասարակ և բարելավված կտրոնապատվաստներ, պատվաստ դնումով՝ճեղքապատվաստ, կեղևի տակ պատվաստ և այլն:

Կողապատվաստ: Պատվաստակալի հիմքի վրա կատարում են 4-5սմ երկարությամբ շեղակի կտրվածք, նրա հաստության 1/3 –ի խորությամբ: Պատվաստացու կտրոնը, որն ունենում է 2-3 աչք, ներքևի երկու կողմերից սրում են աչքի տակից, տեղավորում են կտրվածքի մեջ այնպես, որ լավ համընկնի պատվաստակալի հետ, ապա կապում են, քսում այգու մածուկ:

Կտրոնները կաշելուց հետո կապը հեռացնում են: Երբ բողբոջներն սկսում են շիվեր տալ, անհրաժեշտ է նրանցից ընտրել և թողնել ուժեղ աճած ու լավ զարգացած մեկ շիվ, որը պետք է կապել բութակին՝ շիվին ուղղահայաց դիրք տալու համար, իսկ թույլ շիվերը հեռացնել:



Հասարակ և բարելավված կտրոնապատվաստներ

Այս երկու ձևերն օգտագործվում են այն դեպքում, երբ պատվաստակալը և պատվաստացուն լինում են ***միևնույն հաստության***: Պատվաստը կատարվում է հետևյալ կերպ. պատվաստակալի և պատվաստացուի ծայրերը շեղակի կտրում են այնպես, որ երկու կտրվածքներն ունենան նույն երկարությունը, ապա դնում են իրար վրա այնպես, որ կամբիումի շերտերը կալ համընկնեն, որից հետո կապում են և քսում այգու մածուկ:

Բարելավված կտրոնապատվաստի դեպքում պատվաստակալի և պատվաստացուի ծայրերին կատարված շեղակի կտրվածքների վրա անում են մեկական ճեղք(լեզվակ): Ճեղքն արվում է կտրվածքի կենտրոնից քիչ բարձր, իսկ պատվաստացուի վրա, ընդհակառակը, քիչ ցածր, այնուհետև դրվում իրար վրա այնպես, որ ճեղքերն իրար հետ լավ համընկնեն: Այս ձևն ապահովում է պատվաստի ավելի լավ համաճր:

Պատվաստը դնումով կատարվում է այն դեպքում, երբ պատվաստակալը մի քանի անգամ ավելի հաստ է պատվաստացուից: Այս դեպքում կտրոնի ծայրը շեղ կերպով կտրում են մի կողմից: Պատվաստակալ ճյուղի ծայրը հարթ կերպով կտրում են, ապա

կողքից կատարում են երկայնական շեղակի և նույն չափի կտրվածք, ինչպես պատվաստացու կտրոնի ծայրին էր: Կտրոնը դնում են այդ կտրվածքի վրա, կապում և քսում են այգու մածուկ: Հատած շեղ կտրվածքների վրա կարելի է պատրաստել լեզվակներ, որը ապահովում է պատվաստի լավ կաշռողականությունը:

Ճեղքապատվաստ:

Պատվաստի այս ձևը լինում է լիաճեղք և թերաճեղք: Օգտագործվում է մինչև 4-5սմ տրամագիծ ունեցող ճյուղերի կամ բնի պատվաստման ժամանակ: Պատվաստում են հետևյալ կերպ. պատվաստացու կտրոնի ծայրը սրում են սեպաձև, ապա կտրում են պատվաստակալ ճյուղի ծայրը, կենտրոնից ճեղք են բացում և սեպ դնում, որից հետո պատվաստացու կտրոնները հազցնում են ճեղքի մեջ, և սեպը հանում են:

Եթե պատվաստակալի ճեղքը լինում է թերի, հազցնում են մեկ կտրոն, իսկ եթե լինում է լրիվ, հազցնում են երկու կտրոն: Կտրոնները հազցնելուց հետո կապում և ամբողջ կտրված մակերեսը, ծածկում այգու մածուկով:

Կեղևի տակ պատվաստ: Կատարում են տարիքավոր ծառերի սաղարթում, կմախքային ճյուղերի, բնի, արմատների վրա և այն վերապատվաստի հիմնական եղանակն է:

Այս դեպքում պատվաստվող ճյուղի ծայրն օղակաձև կտրում են և կտրվածքի կողմից կեղևի ու բնափայտի միջև կատարում երկայնական կտրվածք: Պատվաստացու կտրոնի ծայրը մի կողմից շեղակի սրում են և հազցնում բնափայտի ու կեղևի արանքի կտրվածքում, ապա կապում են և քսում այգու մածուկ: Պատվաստի այս ձևը կարելի է կատարել միայն ծառերի լավ հյութաշարժության ժամանակ:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինիթիատիվայի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):